

Հաստատված է «Ակտինա Կապիտալ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի թիվ Ռ-25-001 որոշմամբ

Տնօրեն՝ Տիգրան Դավթյան

12 մայիսի 2025թ

**«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

2025թ

ԵՐԵՎԱՆ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ էջ 1 / 28-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	5
2.1. Ընկերության միակ մասնակցին, գործադիր մարմնին ներկայացվող նվազագույն պահանջներ	5
2.2. Ներքին դիտարկումների մարմնի պարտականություններն ու լիազորությունները, ՆԴՄ ներկայացվող պահանջները.....	7
ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	10
ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ	11
ԳԼՈՒԽ 5. ԳԼՈՒԽ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ	13
ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ	15
ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ	16
ԳԼՈՒԽ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	19
Հավելված 1	20
Աղյուսակ 1	20
Աղյուսակ 2	27

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականությունը (այսուհետ՝ «**Քաղաքականություն**») սահմանում է «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ ընկերության (այսուհետ՝ «**Ընկերություն**») փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ **ՓԼ/ԱՖ**) դեմ պայքարի, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման (**ԶՈՂՏՖ**) դեմ պայքարի, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման ոլորտում ներքին հսկողության նպատակները, խնդիրները, սկզբունքները, հիմնական գործառույթները և իրականացման մոտեցումները:
- 1.2. ՓԼ/ԱՖ քաղաքականությունը մշակված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «**Օրենք**»), դրա հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») նորմատիվ իրավական ակտերի և ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխան:
- 1.3. Օրենքով և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ կանխարգելման և միջազգային պատժամիջոցների պահանջների ապահովման գործառույթները Ընկերությունում իրականացվում են ներքին դիտարկումների մարմնի (այսուհետ՝ «**ՆԴՄ**») կողմից, որն անկախ է և ենթարկվում է (հաշվետու է) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին):
- 1.4. Սույն Քաղաքականության պահանջները տարածվում են Ընկերության բոլոր աշխատակիցների և ղեկավարների վրա:
- 1.5. Սույն Քաղաքականության նպատակներն են՝
 - 1.5.1. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ոլորտում Ընկերության գործունեության համապատասխանեցումը Օրենքի դրույթներին, միջազգային կառույցների կողմից հրապարակված ստանդարտներին և պահանջներին,
 - 1.5.2. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ գործառնություններում Ընկերության ներգրավվածության բացառումը, Ընկերության գործարար համբավի պահպանումը ներքին և միջազգային գործարար հարաբերություններում,
 - 1.5.3. Ընկերության աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ-ին առնչվող կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների բացահայտմանն ուղղված գործողությունների իրականացումը,
 - 1.5.4. Միջազգային պատժամիջոցների պահպանման համատեքստում Ընկերության կողմից իրականացվող գործառնությունները միջազգային պատժամիջոցների պահպանման պահանջներին համապատասխանեցումը, Ընկերության կողմից այդ նպատակին ծառայող սկզբունքները և հսկողական միջոցառումները սահմանումը:
- 1.6. Սույն Քաղաքականության խնդիրն է, ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին համապատասխան, ապահովել Ընկերության աշխատակիցների կողմից «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ» ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ էջ 3 / 28-ից

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ընդհանուր ներքին հսկողություն իրականացումը և պահպանումը ինչպես նաև Ընկերության ռիսկի ախտորոշակի համապատասխանությունը միջազգային կառույցների կողմից սահմանվող ֆինանսական պատժամիջոցների բովանդակությանը :

1.7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով հսկողության հիմնական սկզբունքներն են՝

- 1.7.1. իրենց գործառույթների շրջանակում և անկախ զբաղեցրած պաշտոնից՝ Ընկերության բոլոր աշխատակիցների մասնակցությունը ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության իրականացման գործընթացին,
- 1.7.2. ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի նպատակով, Օրենքի պահանջներին համապատասխան, ներքին հսկողության իրականացման գործընթացում Ընկերության բոլոր աշխատակիցների պատասխանատվության անհատականացումը և վերջիններիս կողմից հիշատակված գործառնությունների (գործառույթների) իրականացման շրջանակում և դրա նպատակով ստացվող տեղեկատվության գաղտնիության պահպանումը,
- 1.7.3. ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության իրականացման արդյունքում Ընկերության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ Ընկերության հաճախորդներին, այլ անձանց իրազեկման անթույլատրելիությունը,
- 1.7.4. ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության կանոնների և մեթոդների սահմանումը,
- 1.7.5. ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության միասնական մոտեցման կիրառումը և առանձին բիզնես գործընթացների իրականացման ժամանակ աշխատակիցների գործողությունների կանոնակարգման միջոցով դրանց ապահովումը:

1.8. Միջազգային պատժամիջոցների պահպանման նպատակով հսկողության հիմնական սկզբունքներն են՝

- 1.8.1. Ընկերության բոլոր աշխատակիցների մասնակցությունը միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման գործընթացին՝ անկախ զբաղեցրած պաշտոնից և գործառույթների շրջանակից,
- 1.8.2. միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման կանոնների և մեթոդների սահմանումը,
- 1.8.3. միջազգային պատժամիջոցների վերաբերյալ միասնական մոտեցման կիրառումը, ինչպես նաև աշխատակիցների գործողությունների կանոնակարգումը առանձին բիզնես գործընթացների իրականացման ժամանակ՝ համապատասխանության ապահովման համար,
- 1.8.4. միջազգային պատժամիջոցների վերաբերյալ կրթության և տեղեկացվածության բարձրացման ծրագրերի իրականացումը՝ աշխատակիցների գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով,

- 1.8.5. պարբերական վերահսկողության և գնահատման իրականացումը՝ միջոցառումների արդյունավետության ապահովման նպատակով:
- 1.9. Սույն Քաղաքականությունում կիրառվող հիմնական հասկացությունները համընկնում են Օրենքում կիրառվող հասկացությունների հետ, եթե այլ բան նախատեսված չէ:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Ընկերության մասնակիցներին, գործադիր մարմնին ներկայացվող նվազագույն պահանջներ

- 2.1.1. Ընկերությունում ՓԼ/ԱՖ և միջազգային պատժամիջոցների ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է հսկողության երեք գծերի կառավարման մոդելի վրա, որտեղ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների մասով Ընկերության հսկողական առաջին գծի գործառույթները վերապահված են հաճախորդին սպասարկող ստորաբաժանման աշխատակիցներին (այսուհետ նաև՝ «**Պատասխանատու աշխատակիցներ**»), հսկողական երկրորդ գծի գործառույթները՝ ՆԴՄ-ին, իսկ երրորդ գծի գործառույթները՝ ներքին աուդիտին:
- 2.1.2. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) պատասխանատու է ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման արդյունավետ ներքին համակարգի ձևավորման համար, ապահովում է դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:
- 2.1.3. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝
- 2.1.3.1. հաստատում է Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին և միջազգային պատժամիջոցների ապահովմանն առնչվող ներքին իրավական ակտերը, այդ թվում նաև ներքին դիտարկումների մարմնի տարեկան աշխատանքային ծրագիրը,
 - 2.1.3.2. իրականացնում է ՆԴՄ-ի կողմից պարբերաբար վերանայվող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության բնագավառում ռիսկերի սահմանման, գնահատման, ուսումնասիրության նպատակով անհրաժեշտ միջոցառումների կատարման վերահսկողությունը,
 - 2.1.3.3. իրականացնում է Ընկերության գործադիր մարմնի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության նպատակով ներքին հսկողության համապատասխան համակարգի ներդրման և ապահովման վերահսկողությունը և այդ համակարգի արդյունավետության ուսումնասիրությունը,
 - 2.1.3.4. քննարկում և հաստատում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության կանոնակարգման ոլորտում

աուդիտորական կամ այլ ստուգմամբ (ուսումնասիրությամբ) բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները, տալիս թերությունների վերացմանն ուղղված հանձնարարականներ և վերահսկում է դրանց կատարման գործընթացը,

- 2.1.3.5. նվազագույնը կիսամյակային պարբերականությամբ ստանում, քննարկում և հաստատում է ՆԴՄ-ի կողմից ներկայացվող հաշվետվությունները,
 - 2.1.3.6. համաձայնություն է տալիս գործադիր մարմնի կողմից ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի նշանակմանը,
 - 2.1.3.7. իրականացնում է Օրենքով, սույն Քաղաքականությամբ և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
- 2.1.4. Ընկերության գործադիր մարմինը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝
- 2.1.4.1. ապահովում է Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության բնագավառում ռազմավարության և քաղաքականության իրականացումը,
 - 2.1.4.2. ապահովում է Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության բնագավառում ռիսկերի սահմանման, գնահատման, ուսումնասիրության և վերահսկողության գծով ներքին գործընթացների ներդրումն ու իրականացումը,
 - 2.1.4.3. ապահովում է Օրենքի և սույն Քաղաքականության հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական և արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,
 - 2.1.4.4. ապահովում է Ընկերության աշխատակիցների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ոլորտում պատշաճ ուսուցումը,
 - 2.1.4.5. պատասխանատվություն է կրում Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության քաղաքականության և գործընթացի ներդրման, ինչպես նաև դրանց ընթացիկ արդյունավետ իրականացման համար,
 - 2.1.4.6. իրականացնում է ՆԴՄ կողմից իրականացված ուսումնասիրությունների, ներառյալ աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները,
 - 2.1.4.7. ապահովում է ներքին դիտարկումների մարմնի անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածությունը,
 - 2.1.4.8. իրականացնում է Օրենքով, սույն Քաղաքականությամբ և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով սահմանված գործառույթներ:

2.2. Ներքին դիտարկումների մարմնի պարտականություններն ու լիազորությունները, ՆԴՄ ներկայացվող պահանջները

- 2.2.1. Ընկերությունում ներքին դիտարկումների մարմնի աշխատանքն ուղղված է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը, ինչպես նաև միջազգային պատժամիջոցներին արձագանքելու արդյունավետ գործընթացների սահմանմանը, այդ թվում՝
- 2.2.1.1. հաճախորդների նույնականացման, պատշաճ ուսումնասիրության և տվյալների թարմացման մեխանիզմների ներդրմանը, ընթացիկ ուսումնասիրությունների, գործարքների մոնիթորինգների և ստուգումների իրականացմանը,
 - 2.2.1.2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկերի վրա հիմնված համակարգի ներդրմանը և կիրառմանը,
 - 2.2.1.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների և հաշվետվությունների ներկայացմանը,
 - 2.2.1.4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի պահպանման կազմակերպմանը,
 - 2.2.1.5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների արդյունավետության բարձրացման նպատակով Ընկերության աշխատակազմի ուսուցման կազմակերպմանը,
 - 2.2.1.6. Ընկերության կողմից միջազգային պատժամիջոցների պահպանման գործընթացի ներդրմանը և վերահսկմանը:
- 2.2.2. Ընկերությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներդնումը (այդ թվում՝ ներքին իրավական ակտերի մշակումը, վերանայումը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնի հաստատման ներկայացումը) և վերահսկողությունն իրականացվում է ՆԴՄ-ի կողմից, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, միջազգային ստանդարտներով և պահանջներով, Ընկերության կանոնադրությամբ, սույն Քաղաքականությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) որոշումներով, հանձնարարականներով, գործադիր մարմնի հրամաններով ու կարգադրություններով:
- 2.2.3. ՆԴՄ-ի ղեկավարը և աշխատակիցները, Քաղաքականությամբ և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերով սահմանված գործառնություններն իրականացնելիս, անկախ են և ունենան **ավագ ղեկավարության** կարգավիճակ:
- 2.2.4. ՆԴՄ-ի ղեկավարն ու աշխատակիցներն իրավունք ունեն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) անմիջականորեն ներկայացնելու Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ

միակ մասնակցի) և գործադիր մարմնի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող հարցերի քննարկմանը:

2.2.5. ՆԴՄ-ի ղեկավարին ու աշխատակիցներին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Ընկերության կողմից ձեռքբերվող ու պահպանվող ՀՀ օրենսդրությամբ և Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները՝ այդ թվում՝ հաճախորդների հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը:

2.2.6. ՆԴՄ-ի ղեկավարն ու աշխատակիցները իրավունք ունեն գործարքների կամ գործարար հարաբերությունների, ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել Ընկերության ցանկացած աշխատակցից:

2.2.7. ՆԴՄ-ն՝

- 2.2.7.1. իրականացնում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատում,
- 2.2.7.2. կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ, պահպանում է դրանց արդյունքները,
- 2.2.7.3. իրականացնում է գործարքների կամ գործարար հարաբերությունների կասկածելի որակում, կասեցում, իրականացման մերժում կամ դադարեցում, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցում՝ հանդիսանալով վերջնական որոշում կայացնող,
- 2.2.7.4. ապահովում է Ընկերության անունից ՀՀ ԿԲ ներկայացվող պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների, կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների գծով հաշվետվությունների ներկայացումը,
- 2.2.7.5. տրամադրում է խորհրդատվություն և օժանդակում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնին՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման հետ կապված իրենց գործառույթները կատարելու հարցերում,
- 2.2.7.6. իրականացնում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների ոլորտում Ընկերության աշխատակիցների ուսուցում (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրություն, միջազգային պատժամիջոցների պահանջների ապահովմանն առնչվող Ընկերության ներքին իրավական ակտեր, գործնական օրինակներ),
- 2.2.7.7. իրականացնում է Ընկերությունում նոր պրոդուկտների, գործող պրոդուկտների նոր ուղիների գործարկման, ֆինանսական գործիքների, գործընթացների ներդրման և/կամ դրանց էական փոփոխությունների դեպքում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատում, ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

- 2.2.7.8. Պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կատարած գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, Ընկերության աշխատակիցների գործողությունների համապատասխանությունն Օրենքին, Քաղաքականությանը և դրանց հիման վրա ընդունված Ընկերության ներքին իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ՆԴՄ-ն հաշվետվություն է ներկայացնում գործադիր մարմնին և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին):
- 2.2.8. ՆԴՄ-ն վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում ՀՀ ԿԲ-ին Օրենքով և Քաղաքականությամբ սահմանված հաշվետվությունների տրամադրումը և Ընկերության կողմից ընդունված այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացումը:
- 2.2.9. ՆԴՄ-ն գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին տեղեկացնում է գործադիր մարմնին և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին), կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ ԿԲ-ին տրամադրելուց հետո:
- 2.2.10. ՓԼ/ԱՖ կանխարգելումը Ընկերության յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է և Ընկերության բոլոր աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում հաճախորդի, գործակալի, լիազոր անձի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված ցանկացացած երրորդ անձի կողմից ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների առկայության մասին պարտավոր են անհապաղ տեղեկացնել ՆԴՄ-ին:
- 2.2.11. ՓԼ/ԱՖ կանխարգելմանը վերաբերող ՆԴՄ-ի ղեկավարի կողմից ուղարկվող գրությունները, հանձնարարականները և կարգադրությունները ենթակա են պարտադիր կատարման Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից, իսկ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է պահպանման առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:
- 2.2.12. ՆԴՄ ղեկավար կարող է նշանակվել անձ, որը համապատասխանում է ինչպես ՀՀ ԿԲԻ 2014 թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգով հաստատված նվազագույն չափանիշներին, այնպես էլ հետևյալ չափանիշներին.

2.2.12.1. ունի բարձրագույն կրթություն և միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական,

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ էջ 9 / 28-ից

- 2.2.12.2. ունի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի աշխատանքի առնվազն 1 (մեկ) տարվա աշխատանքային փորձ կամ բանկային/ներդրումային գործառնությունների իրականացման հետ կապված կառավարման առնվազն 5 (հինգ) տարվա փորձ,
- 2.2.12.3. տիրապետում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը և նորմատիվ այլ իրավական ակտերին, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում միջազգային ստանդարտներին և ներքին հսկողության կանոններին,
- 2.2.12.4. ունի ՖԱԹՖ հանձնարարականների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկերի գնահատման բնագավառում միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող սկզբունքների գիտելիքներ, միջազգային որակավորումը դիտվում է որպես առավելություն:
- 2.2.12.5. Ազատ հաղորդակցվում է հայերեն և ռուսերեն լեզուներով, տիրապետում է անգլերեն լեզվին:

ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- 3.1. Ընկերությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման համակարգի համապարփակ ներկայացման նպատակով Քաղաքականությամբ նկարագրվում են ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպման հիմնական սկզբունքները և Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակը (տե՛ս Հավելված 1): ՓԼ/ԱՖ ռիսկի կառավարման մանրամասն գործընթացները, գործիքները, ինչպես նաև դրանցից բխող այլ խնդիրները նկարագրվում են Ընկերության այլ ներքին իրավական ակտերով (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Ընթացակարգ):
- 3.2. ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի գնահատումն իրականացվում է Ընկերության ՓԼ/ԱՖ ներհատուկ ռիսկի և դրա կառավարմանն ուղղված ներքին հսկողության համակարգի գնահատման հիման վրա, որի արդյունքում Ընկերությունը գնահատում է իր գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ մնացորդային ռիսկը՝ նպատակ ունենալով տարանջատել ընդունելի և անընդունելի ռիսկերը և ներդնել ռիսկերի պատշաճ կառավարման համակարգ: ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը վերանայվում են ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:
- 3.3. Ընկերությունը ՓԼ/ԱՖ ռիսկի մակարդակը որոշում է յուրաքանչյուր հաճախորդի գծով: Ընկերության աշխատակիցներն իրականացնում են ռիսկի մակարդակի վերահսկողության, հայտնաբերման, գնահատման, ուսումնասիրության վերլուծության գործընթացներ, ինչպես նաև իրականացնում են ՓԼ/ԱՖ ռիսկի նվազեցման/կանխարգելման միջոցառումներ:
- 3.4. Ընկերության աշխատակիցների կողմից հաճախորդի ՓԼ/ԱՖ ռիսկի մակարդակի գնահատումը հիմնվում է հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների/տեղեկատվության, նրա գործունեության և հաճախորդի կողմից կատարվող ցանկացած գործարքների վերաբերյալ

Ընկերության աշխատակիցների մոտ առկա փաստաթղթերի վերլուծության արդյունքի հիման վրա:

- 3.5. Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Ընկերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս՝ ՓԼ/ԱՖ ռիսկը գնահատվում է բարձր, միջին կամ ցածր, որի որոշման հիմքում առնվազ են ընկած են ստորև բաղադրիչները՝
 - 3.5.1. երկրի կամ աշխարհագրական տարածքի ռիսկ,
 - 3.5.2. գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկ,
 - 3.5.3. պրոդուկտի, ծառայության կամ մատուցման եղանակի ռիսկ:
- 3.6. Բարձր ռիսկային հաճախորդների նկատմամբ կիրառվում է հավելյալ ուսումնասիրություն, միջին ռիսկային հաճախորդների նկատմամբ՝ պատշաճ ուսումնասիրություն, իսկ ցածր ռիսկային հաճախորդների նկատմամբ կարող է կիրառվել պարզեցված ուսումնասիրություն:
- 3.7. Պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության դեպքում կամ ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, բացառությամբ, երբ առկա է միջին կամ բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է ցածր ռիսկի գործարք, որը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:
- 3.8. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում Պատասխանատու աշխատակիցը պետք է այդ մասին տեղեկացնի ՆԴՄ-ին՝ ստանալով ՆԴՄ-ի կարծիքը տվյալ ռիսկի վերանայման և նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ իրականացնելու նպատակով:
- 3.9. Ընկերությունը մշտապես նպատակաուղղված է նվազեցնել ռիսկային հաճախորդների թիվը՝ հիմնվելով այդ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վրա: Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ ռիսկի հանդուրժողականությունը (ռիսկի ակտիվություն) սահմանում է՝ բարձր ռիսկային հաճախորդների քանակի վերին շեմը (տոկոսը):

ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՌԻՍԿՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 4.1. Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն կարող է հաստատել միայն հաճախորդի նույնականացման համար Քաղաքականությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված տեղեկությունները ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո, այդ թվում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման միջոցով: Ընկերությունը կարող է նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա (7 օր) ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱՐԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»

անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

- 4.2. Ընկերությունը չի հաստատում կամ շարունակում գործարար հարաբերությունները այն օտարերկրյա անձանց հետ, որոնք չունենալով ՀՀ-ում որևէ տնտեսական և(կամ) անձնական շահ, չեն ներկայացնում ֆինանսական հոսքերի սպասարկումը հայաստանյան ֆինանսական համակարգի միջոցով կազմակերպելու տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորումները հավաստող ողջամիտ տեղեկություններ:
- 4.3. Ընկերությունը հաճախորդի ուսումնասիրությունը սկսում է գործարար հարաբերություններ հաստատելու նպատակով նրա՝ Ընկերությանը դիմելու պահից և շարունակում է մինչև հաճախորդի ու Ընկերության միջև պայմանագրային հարաբերությունների դադարեցումը:
- 4.4. Հաճախորդի ուսումնասիրությունը ներառում է հաճախորդի վերաբերյալ Ընկերության ունեցած տեղեկությունների հիման վրա հաճախորդի մասին տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն և գնահատում:
- 4.5. Ընկերությունը կարող է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատել միայն հաճախորդի նույնականացման համար տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը), ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո:
- 4.6. Ընկերությունը պետք է պարզի, թե արդյո՞ք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին և քայլեր ձեռնարկի պարզելու և բացահայտելու հաճախորդի իրական շահառուին:
- 4.7. Հաճախորդների հավելյալ ուսումնասիրությունն իրականացվում է նվազագույնը հետևյալ դեպքերում՝
 - 4.7.1. հաճախորդի, իրական շահառուի կամ հաճախորդի լիազորված անձի հետ գործարար հարաբերություն հաստատելիս,
 - 4.7.2. երբ կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,
 - 4.7.3. կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ տեսանկյունից:
- 4.8. Հաճախորդի ռիսկի ցածր մակարդակի գործոնների առկայության դեպքում Ընկերությունն իրականացնում է հաճախորդի գործարքների և գործարար հարաբերությունների պարզեցված ուսումնասիրություն:
- 4.9. Հաճախորդի գործարքների պարզեցված ուսումնասիրության գործընթացը չի կարող իրականացվել հաճախորդի գործարքներում և գործարար հարաբերություններում կասկածելիության չափանիշների առկայության դեպքում:
- 4.10. Եթե հաճախորդի ռիսկը ոչ բարձր է և ոչ ցածր, ապա ռիսկի դասը գնահատվում է միջին:
- 4.11. Ընկերությունը, ռիսկի միջին մակարդակի հաճախորդների առկայության դեպքում, մշտապես իրականացնում է ռիսկի միջին մակարդակի հաճախորդների գործարքների և գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն:
- 4.12. Բարձր ռիսկի գործոնների առկայության դեպքում Ընկերությունն իրականացնում է հաճախորդի գործարքների և գործարար հարաբերությունների հավելյալ ուսումնասիրություն: Հավելյալ ուսումնասիրություն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ գործարքի կամ «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱՐԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»

գործարար հարաբերության ընթացքում բացահայտվում կամ ի հայտ է գալիս բարձր ռիսկի չափանիշ:

- 4.13. Բարձր ռիսկի չափանիշները, ի թիվս ՀՀ Օրենսդրությամբ սահմանվածների, նկարագրված են Ընկերության այլ ներքին իրավական ակտով և սույն Քաղաքականությանը կից Հավելված 1-ում:
- 4.14. Հաճախորդի և նրա կողմից կատարված գործարքների վերաբերյալ տեղեկությունները , ներառյալ՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները) թարմացվում են հետևյալ հաճախականությամբ՝
- 4.14.1. ցածր ռիսկ՝ 2 տարին մեկ,
 - 4.14.2. միջին ռիսկ՝ տարին մեկ,
 - 4.14.3. բարձր ռիսկ՝ 6 ամիսը մեկ անգամ,
 - 4.14.4. քաղաքական ազդեցություն ունեցող անձ (ՔԱՈՒԱ)՝ 3 ամիսը մեկ անգամ:
- 4.15. Քաղաքական ազդեցություն ունեցող անձ (ՔԱՈՒԱ) է համարվում պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառնություններ իրականացրած կամ իրականացնող անձ (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձ): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառնություններ իրականացնող անձանց:
- 4.16. Անձի քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով Ընկերությունը կարող է իրականացնել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին տեղեկատվության ուսումնասիրում հրապարակային աղբյուրներից և տվյալների մասնավոր բազաներից:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ

- 5.1. Գործարքը կարող է կասկածելի որակվել ինչպես գործարքը կատարելու (հաճախորդին սպասարկելու) ժամանակ, այնպես էլ՝ ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդների գործարքների դիտանցման ընթացքում:
- 5.2. Գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, պետք է որակվի որպես կասկածելի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրվի ՀՀ ԿԲ, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»

օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

5.3. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ՀՀ ԿԲ-ին հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցը դիտարկվում է հետևյալ դեպքերում.

5.3.1. երբ դիտարկվող իրավիճակն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին, կամ

5.3.2. ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ տիպաբանություններից, սակայն դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով:

5.4. Այն դեպքերում, եթե դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվել և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ՀՀ ԿԲ-ին չի տրամադրվել, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները Ընկերության կողմից փաստաթղթավորվում և պահպանվում են առնվազն 5 տարի՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:

5.5. ՆԴՄ-ն իրավունք ունի առավելագույնը 5 օրով, իսկ ՀՀ ԿԲ հանձնարարականի ստացման դեպքում՝ պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը՝ անմիջապես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրելով ՀՀ ԿԲ-ին:

5.6. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին ՀՀ ԿԲ որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն Ընկերության կողմից ստանալուց հետո:

5.7. Ընկերության կամ ՀՀ ԿԲ-ի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչվել միայն ՀՀ ԿԲ-ի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե առկա չէ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտություն:

5.8. Այն դեպքում, երբ ՀՀ ԿԲ-ի կողմից կասեցման երկարաձգման վերաբերյալ որոշումը չի տրամադրվել Ընկերությանը, կասեցումը համարվում է ուժը կորցրած:

5.9. Մինչև կասեցման վերացման մասին տեղեկության ստացումը Պատասխանատու աշխատակիցը իրավունք չունի կատարել համապատասխան գործարքը:

5.10. Գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատման մերժումն իրականացվում է հետևյալ դեպքերում.

5.10.1. ՀՀ ԿԲ-ի որոշմամբ սահմանված համապատասխան հանձնարարականների ստացման դեպքերում,

5.10.2. ՀՊՈԻ-ի անհնարինության դեպքում,

- 5.10.3. Անձանց Պատժամիջոցների ներքո գտնվելու դեպքերում, ընդ որում, այդ դեպքում հաճախորդների գործարքները կատարվում են հաշվի առնելով միջազգային պատժամիջոցների պահանջները, իսկ այդ պահանջները խախտելու դիմելու ակալայության դեպքում՝ մերժվում են:
- 5.11. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության դադարեցումն իրականացվում է հետևյալ դեպքերում.
- 5.11.1. Ընկերության հաճախորդի ընթացիկ պատշաճ ուսումնասիրության անհնարինության կամ ձախողման պարագայում:
- 5.12. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժման կամ դադարեցման դեպքերում պետք է դիտարկել դրանց կասկածելի որակելու հարցը:
- 5.13. Ահաբեկչության հետ կապված անձանց կամ ի շահ նրանց ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ համատեղ կարգով գույք, տնտեսական ռեսուրսներ կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայություններ հասանելի դարձնելն արգելվում է:
- 5.14. ՄԱԿ անվտանգության խորհրդի բանաձևերով, դրանց համաձայն կամ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված ցանկերում ներառված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերը հրապարակվում են ՀՀ ԿԲ-ի կողմից՝ իր ինտերնետային կայքում:
- 5.15. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց հասկացությանը համապատասխանող անձանց վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում Ընկերությունը պարտավոր է անմիջապես հայտնել ՀՀ ԿԲ:
- 5.16. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում՝ գործարքը կամ գործարար հարաբերությունն անմիջապես որակվում է կասկածելի և ՀՀ ԿԲ-ին տրամադրվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:
- 5.17. Ընկերության բոլոր աշխատակիցներին, անկախ զբաղեցրած պաշտոնից, արգելվում է որևէ կերպ հրապարակել կամ որևէ անձի հայտնի դարձնել հաճախորդի և(կամ) գործարքի վերաբերյալ ՀՀ ԿԲ-ին հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին, այդ թվում՝ անձի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու կամ սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև հաճախորդի՝ «Սև ցուցակում» ներառված լինելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

- 6.1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների պահպանման թեմաներով Ընկերության աշխատակիցների, այդ թվում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի), գործադիր մարմնի, Ներքին աուդիտի համար ուսուցումը

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ»
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ էջ 15 / 28-ից

կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ, իսկ նոր ընդունված աշխատակիցների համար՝ աշխատանքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում: Ուսուցման արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, միջազգային պատժամիջոցների պահպանմանը վերաբերող հարցեր են ընդգրկվում նոր և հին աշխատակիցների որակավորման ստուգման (ատեստավորման) հարցաշարերում:

- 6.2. ՆԴՄ-ի կողմից մշակվում է և ամեն տարի թարմացվում է Ընկերության աշխատակիցների ուսուցման ծրագիրը, որը պարտադիր ներառում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՀՀ օրենսդրության փոփոխությունները, միջազգային պատժամիջոցների պահպանմանն ուղղված կարգավորումը, վերջիններիս մասով Ընկերությունում ներդրված կարգավորման ու դրա փոփոխությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև սահմանվում է ուսուցման ժամանակացույցը, որը ՆԴՄ-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներկայացվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) հաստատմանը:
- 6.3. ՆԴՄ-ի կողմից կարող են կազմակերպվել նաև առանձին թեմատիկ, հատուկ դասընթացներ, թեստավորումներ և քննարկումներ:
- 6.4. Ընկերությունում իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում;

ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

- 7.1. Միջազգային պատժամիջոցները (այսուհետ՝ «Պատժամիջոցներ») սահմանվում են միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կողմից ընդունված միջազգային իրավական ակտերի, երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերի, տարբեր երկրների պետական մարմինների կողմից ընդունված օրենքների և իրավական այլ ակտերի միջոցով, որոնց պարբերաբար հետևում է ՆԴՄ-ն:
- 7.2. Ընկերությունում հաճախորդներին սպասարկելիս, շահագրգիռ ստորաբաժանումների կողմից ձեռնարկվում են միջոցառումներ պահպանելու ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Միացյալ Թագավորության և, ըստ անհրաժեշտության, նաև այլ երկրների, երկրների պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և միջկառավարական կազմակերպությունների կողմից սահմանված պատժամիջոցները:
- 7.3. Ընկերությունում պահպանվում են Պատժամիջոցների հետևյալ տեսակները.
 - 7.3.1. երկրների նկատմամբ կիրառված սահմանափակումները,
 - 7.3.2. երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների նկատմամբ կիրառված սահմանափակումները,
 - 7.3.3. անձերի նկատմամբ կիրառված սահմանափակումները,

7.3.4. գույքի սառեցման պահանջները:

- 7.4. Ընկերության ղեկավարությունն ապահովում է անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի Ընկերությունում պահպանվեն Քաղաքականությամբ սահմանված միջազգային սահմանափակումները և Պատժամիջոցների պահանջները:
- 7.5. Ընկերության աշխատակիցները պարտավոր են իրականացնել հաճախորդների սպասարկումը՝ պահպանելով Ընկերության կողմից կիրառված մոտեցումը՝ երկրների հանդեպ, երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և/կամ գործունեության ոլորտների սահմանափակումների մասով:
- 7.6. Գործադիր մարմինն ապահովում է Ընկերությունում միջազգային սահմանափակումների և Պատժամիջոցների պահանջների կիրառումը և դրանց նկատմամբ հսկողությունը, անձնակազմի ուսուցումը և տեղեկացվածությունը:
- 7.7. Ընկերությունը Պատժամիջոցների պահանջների պահպանումն իրականացնում է հաճախորդների, գործընկերների, Ընկերությանը ծառայություն մատուցող անձանց, ներառյալ՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների, դեպոզիտար ծառայություններ մատուցող ընկերությունների, մատակարարների և բոլոր տեսակի երրորդ անձանց հետ հարաբերություններում:
- 7.8. Պատժամիջոցներով սահմանված պահանջների տարընկալման դեպքում պատժամիջոցներով սահմանված դրույթների կատարումն ենթակա է մեկնաբանման ՆԴՄ-ի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության՝ իրավաբանական և համապատասխանության գործառույթն իրականացնող Ընկերության կառուցվածքային ստորաբաժանման աջակցությամբ:
- 7.9. ՆԴՄ-ն, ելնելով գործընկեր ֆինանսական հաստատությունների մոտեցումներից և Պատժամիջոցներից բխող հնարավոր ռիսկերից և գործարար պրակտիկայում ընդունված վարքագծից, կարող է առաջարկել կիրառել Պատժամիջոցների պահանջներից առավել խիստ մոտեցում, եթե ՆԴՄ կարծիքով դա անհրաժեշտ է համբավի և ֆինանսական ռիսկերը նվազեցնելու համար:
- 7.10. Ընկերությունում միջազգային պատժամիջոցների պահանջների պահպանման, կատարման և անհրաժեշտության դեպքում՝ դրանց մասին աշխատակիցներին ուսուցման, խնդիրների հետ կապված գործիքակազմի և գործընթացների ներդրման համակարգումն իրականացվում է ՆԴՄ-ի կողմից:
- 7.11. Անկախ զբաղեցրած պաշտոնից՝ Ընկերության բոլոր աշխատակիցներին արգելվում է աջակցել, անգործություն ցուցաբերել, փոխակերպել կամ քողարկել տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրականացնել հաճախորդներին Պատժամիջոցների պահանջներից խուսափելու նպատակով:
- 7.12. Պատժամիջոցների ենթարկված կամ պատկան մարմինների կողմից ցուցակված անձանց համընկնությունների ստուգման համար Ընկերությունը կիրառում է հատուկ տեղեկատվական շտեմարան:
- 7.13. Պատժամիջոցներից բխող պահանջների պահպանման հետ կապված անհամապատասխանությունները, երրորդ անձանցից հարցումները և հարցադրումները պետք է անմիջապես տեղեկացվեն ՆԴՄ-ին:

- 7.14. ՆԴՄ-ն աջակցում է Պատժամիջոցների գծով վերահսկող մարմիններից և գործընկեր ֆինանսական հաստատություններից ստացված հարցումների պատասխանների պատրաստմանը՝ Պատժամիջոցների պահպանմանն ուղղված հարցադրումների մասով:
- 7.15. Այն դեպքում, երբ իրավաբանական անձի 50 (հիսուն) և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակից ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով վերաբերելի են Պատժամիջոցների պահանջները, ապա իրավաբանական անձը նույնպես դիտարկվում է որպես Պատժամիջոցի ներքո գտնվող, ընդ որում՝ ՆԴՄ-ն կարող է կիրառել առավել խիստ մոտեցում, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում հաշվի առնելով օրենսդրության պահանջները, գործարար սովորույթները, նախատեսվող գործարքից (գործարար հարաբերությունից) բխող ռիսկերը, միջազգային գործընկերների մոտեցումները, ինչպես նաև այն դեպքերում, երբ տվյալ իրավաբանական անձի բոլոր սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը սպառիչ չէ կամ առկա են կասկածներ իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ:
- 7.16. Պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ գործարքներ կնքելիս Ընկերությունը ղեկավարվում է Պատժամիջոցներից բխող պահանջներով և պատժամիջոցը նախատեսող համապատասխան իրավական ակտի և դրանց վերաբերյալ մեկնաբանություններ/պարզաբանումների դրույթներով:
- 7.17. Պատժամիջոցների ներքո գտնվող և/կամ համապատասխան ցուցակներում ներառված անձանց հետ փոխկապակցված անձանած մասնակցությամբ գործարքների մասով վերջնական որոշում կայացնելու նպատակով ՆԴՄ-ի ղեկավարը նախաձեռնում է քննարկում գործադիր մարմնի և ըստ անհրաժեշտության գործադիր մարմնի նախանշած շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ: Գործարքի կատարման վերաբերյալ քննարկման և վերջնական որոշման արդյունքները ենթակա են արձանագրման:
- 7.18. Ընկերությունում միջազգային սահմանափակումների և պատժամիջոցների պահանջների շրջանակներում գործարքների դիտարկումը ընդգրկում է առնվազն հետևյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն.
- 7.18.1. հաճախորդի ռեզիդենտության պարզում և գնահատում միջազգային պատժամիջոցների տեսանկյունից,
 - 7.18.2. օտարերկրյա հաճախորդի կենսական շահերի կենտրոնի պարզում գնահատում միջազգային պատժամիջոցների տեսանկյունից,
 - 7.18.3. այլ երրորդ անձինք, գործընկերներ, ներգրավված երկրներ, արժույթ, ծագման աղբյուր, նպատակ, ապրանքների ու ծառայությունների բնույթ, գործունեություն և տնտեսական նպատակ, այլ գործոններ, ներառյալ քաղաքացիություն, ծննդավայրը, բնակության վայր և այլն, որոնք ՆԴՄ կամ գործարքը կատարող ֆինանսական հաստատության կարծիքով էական դեր կարող են ունենալ Պատժամիջոցների շրջանցման հարցում:
- 7.19. Գործընկերային հարաբերություններ հաստատագրելուց առաջ Ընկերությունը պատշաճ ուսումնասիրության գործընթացում, ի թիվս այլնի, պարզում է հավանական գործընկեր

կառույցների մոտեցումները և քաղաքականությունը պատժամիջոցների պահանջների տեսանկյունից ռիսկերի հիման վրա ուսումնասիրության, պատժամիջոցներ նախատեսող իրավական ակտերի դրույթների պահպանման գործընթացներում:

- 7.20. Եթե գործող հաճախորդի կամ նրա գործարքների նկատմամբ որևէ պահից կիրառվում են Պատժամիջոցներ, ապա Ընկերությունը խելամիտ ժամկետում կիրառում է Պատժամիջոցներով սահմանված պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դադարեցնելով հաճախորդի հետ գործարար հարաբերությունը և/կամ մերժելով գործարքները, ինչն իրականացվում է նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Նշված դրույթները կիրառելի են նաև Ընկերության գործընկեր ֆինանսական հաստատությունների, մատակարարների և համագործակցող այլ անձանց հետ հարաբերություններում:
- 7.21. Պատժամիջոցների պահանջների խախտման բարձր ռիսկի չափանիշներով բնութագրվող գործարքի (գործարար հարաբերության) գծով Ընկերությունը կարող է որոշում կայացնել մերժել գործարքը, գործարար հարաբերության հաստատման փորձը կամ դադարեցնել հաճախորդի հետ առկա գործարար հարաբերությունը, ընդ որում՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով ՆԴՄ-ի նախաձեռնությամբ կազմակերպվում է քննարկում Գործադիր մարմնի և, ըստ անհրաժեշտության, վերջինիս նախանշած շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ: Գործարքի կատարման վերաբերյալ քննարկման և վերջնական որոշման արդյունքները ենթակա են արձանագրման:

ԳԼՈՒԽ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 8.1. Տվյալ Քաղաքականությունը ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստանդարտների և պահանջների փոփոխման, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում:
- 8.2. Սույն Քաղաքականությանը պարտադիր կերպով պետք է ծանոթանան Ընկերության բոլոր աշխատակիցները (այդ թվում՝ նաև ղեկավարները):

Հավելված 1

Գործարար հարաբերությունների մերժման դեպքերը, բարձր ռիսկային չափանիշներով բնութագրվող կամ սպասարկման հատուկ սահմանափակումներով բնութագրվող որակական չափանիշներ

Աղյուսակ 1

	<u>Նկարագրություն</u>	<u>Ռիսկ ախորժակ</u>	<u>Մեկնաբանություն</u>
1.	Անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ կամ միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ	Արգելված	-
2.	Որևէ տեսակի գործարար հարաբերություն կեղծ բանկերի կամ այն ֆինանսական հաստատությունների հետ, որոնք սպասարկում են կեղծ բանկերի	Արգելված	-
3.	Ըստ ներկայացնողի արժեթղթերով գործարքներ	Արգելված	-
4.	Անձինք, որոնք գրանցված են կամ գործունեություն են ծավալում ՖԱԹՖ-ի կողմից հրապարակվող «սև ցուցակում» ներառված երկրներում ¹ :	Արգելված	-
5.	Անձինք, որոնք ներառված են ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՄԹ-ի պատժամիջոցների ցանկերում:	Արգելված	-

¹ <https://www.fatf-gafi.org/en/countries/black-and-grey-lists.html>

6.	Իրավաբանական անձինք, որոնց 50% և ավել բաժնեմասին տիրապետող բաժնետերերը գտնվում են ԱԱՎԳ ² -ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում:	Արգելված	-
7.	Հանրամատչելի հավաստի աղբյուրներում և լայնորեն կիրառվող տեղեկատվական շտեմարաններում (Worldcheck, Accuity և այլն) որպես «պատժամիջոցների հետ ասոցացվող անձ» բնութագրվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ անձինք, ովքեր ունեն ուղղակի կապ պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների հետ, օրինակ՝ ցանկերում ներառված անձանց ընտանիքի անդամներ, այդ թվում՝ կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, իրավաբանական անձանց դեպքում՝ սեփականատերեր, իրական շահառու, իրավաբանական անձի կառուցվածքում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք³	Արգելված	-
8.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ներգրավված են ՓԼ/ԱՖ և ՋՈՁ ՏՖ հանցագործություններում	Արգելված	Այդ թվում նաև՝ որպես մեղադրյալ:

² ԱՄՆ գանձապետարանի արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակ (ԱԱՎԳ) (OFAC)

³ Խորհրդի/վարչության/գործադիր մարմնի անդամներ:

9.	ԱՖ և ՉՈՁ ՏՖ տեսանկյունից ռիսկային երկրներում գրանցված, ռեզիդենտ կամ գործունեություն ծավալող ֆիզիկական, իրավաբանական անձինք, այդ թվում ոչ առևտրային կազմակերպություններ: ⁴	Արգելված/Սահմանափակ	Գործարար հարաբերություններ կարող են հաստատվել տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ լինելու պարագայում, օրինակ՝ պայմանավորված որոշ երկրներում հայ համայնքի առկայության հանգամանքով և այլն:
10.	Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներում գրանցված, այդ երկրների ռեզիդենտ և կոռուպցիոն ռիսկերով բնութագրվող ոլորտներում (կառուցապատման, դեղագործական, հանքարդյունաբերություն և այլ ոլորտներ) գործունեություն ծավալող անձինք ⁵ :	Սահմանափակ/բարձր ռիսկ	Գործարար հարաբերություն կարող է հաստատվել այն դեպքում, եթե ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ միջոցառումների (անհրաժեշտության դեպքում հավելյալ ՀՊՈԻ-ի) համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հաշիվ բացող ընկերությունը ունի և կիրառում է անհրաժեշտ ընթացակարգեր և բնութագրվում է որպես հեղինակավոր կազմակերպություն, ինչպես նաև առկա են ողջամիտ հիմքեր ՀՀ ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական և այլ իրավաչափ շարժառիթների վերաբերյալ:

⁴ Երկրների ցանկը սահմանվում է հիմք ընդունելով 2021-2023թթ. ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման շրջանակներում լիազոր մարմնի կողմից առանձնացված երկրները՝ մասնավորապես, այն երկրները, որոնք գտնվում են պատերազմական իրավիճակում, հայտնի են որպես ահաբեկչական խմբերի ակտիվ գործունեության վայր (Աֆղանստան, Հորդանան, Լիբանան, Թուրքիա, Իրաք, Պակիստան, Սիրիա, Լիբիա, Եմեն, Բանգլադեշ): Միաժամանակ, նշված ցանկը սպառիչ չէ և որպես բարձր ռիսկային կարող են դիտարկվել նաև այլ երկրներ կամ տարածքներ՝ ելնելով դիտարկման պահին տիրող աշխարհաքաղաքական զարգացումներից և այլ հանգամանքներից:

⁵ Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրների ցանկը սահմանվել է հիմք ընդունելով «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2024» հաշվետվությունը (<https://images.transparencycdn.org/images/Report-CPI-2024-English.pdf>): Որպես բարձր ռիսկային դիտարկվել են համապատասխան սանդղակով 40-ից ցածր գնահատված երկրները:

11.	Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք և ընտանիքի անդամները կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներից ⁶	Արգելված/ Սահմանափակ	Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ (հավելյալ ՀՊՈԻ) համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հստակ հիմնավորվում է եկամտի աղբյուրը, անձի եկամուտները համադրելի են ունեցվածքի և նախատեսվող գործարքների ծավալի հետ, իսկ հանրամատչելի աղբյուրներում և մասնավոր տեղեկատվական շտեմարաններում բացակայում է բացասական բնույթի որևէ տեղեկություն, ինչպես տվյալ անձի այնպես էլ վերջինիս հետ փոխկապակցված անձանց և ընտանիքի անդամների վերաբերյալ, ինչպես նաև առկա են ողջամիտ հիմքեր ՀՀ ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական և այլ իրավաչափ շարժառիթների վերաբերյալ:
12.	Թրասթեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք, որոնք գրանցված են կամ ռեզիդենտ են կամ գործունեություն են ծավալում թափանցիկության և	Արգելված	-

⁶ Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

	տեղեկատվության փոխանակման անարդյունավետ ռեժիմներ ունեցող երկրներում ⁷		
13.	Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչներ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական բացեր ունեցող երկրներից ⁸ , կամ այն երկրներից, որոնց ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի գնահատման հաշվետվությամբ համապատասխան ոլորտի վերահսկողությունը բացակայում է կամ ունի "Ցածր" արդյունավետություն:	Արգելված	-
14.	Առանց լիցենզիայի գործունեություն ծավալող կազմակերպություններ, եթե գործունեության վայրի երկրի օրենսդրությամբ համապատասխան ոլորտը ենթակա է լիցենզավորման	Արգելված	-
15.	Չենքի առուվաճառքով զբաղվող կազմակերպություններ	Արգելված	Բացառությամբ ՀՀ Պաշտպանության նախարարության

⁷ Որպես տեղեկատվության փոխանակման և թափանցիկության անարդյունավետ ռեժիմ ունեցող երկրներ կարող են դիտարկել ՖԱԹՖ և ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային կառույցների գնահատումներով «Անմիջական արդյունք 2 (Միջազգային համագործակցություն)» և «Անմիջական արդյունք 5 (Իրավաբանական անձինք և կազմավորումներ)» միաժամանակ որպես արդյունավետության «Ցածր» մակարդակ ունեցող գնահատված երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող իրավաբանական կազմավորումներին, այդ թվում թրաթերին: Համապատասխան երկրների ցանկը ներկայացված է 2025 թվականի մարտի դրությամբ: (<https://www.fatf-gafi.org/en/publications/Mutualevaluations/Assessment-ratings.html>):

⁸ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ռազմավարական բացեր ունեցող երկրների ցանկը սահմանվում և պարբերաբար վերանայվում է ՖԱԹՖ-ի կողմից:

Համապատասխան երկրների ցանկը ներկայացված է 2025 թ.-ի մարտի դրությամբ: (<https://www.fatf-gafi.org/en/publications/High-risk-and-other-monitored-jurisdictions/increased-monitoring-february-2025.html>)

Բուլղարիա, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Խորվաթիա, Հանթի, Զամբիա, Քենիա, Մալի, Մոզամբիկ, Նամիբիա, Նիգերիա, Ֆիլիպիններ, Սենեգալ, Հարավային Աֆրիկա, Հարավային Սուդան, Սիրիա, Տանզանիա, Թուրքիա, Վիետնամ, Եմեն

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ և ԱԿԱԲԵԿՂՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ էջ 24 / 28-ից

16.	Հաճախորդներ, որոնք զբաղվում են երկակի նշանակության, ինչպես նաև միջավայրի վրա վտանգավոր ազդեցություն ունեցող ապրանքների արտադրությամբ և վաճառքով:	Արգելված	-
17.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք ներդրումներ են կատարում կրիպտոակտիվների ոլորտում	Սահմանափակ	Բացառություն են կազմում տարբերության պայմանագրեր (Contract for difference), որոնց դեպքում հաճախորդը փաստացի չի տիրապետում այդ ակտիվներին:
18.	Դեսպանատներ, հյուպատոսություններ և համանման ներկայացուցչություններ	Բարձր ռիսկ	
19.	Ոչ առևտրային կազմակերպություններ, բացառությամբ ԱՖ տեսանկյունից ռիսկային երկրների հետ կապ ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների	Բարձր ռիսկ	
20.	Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններ	Բարձր ռիսկ /սահմանափակ/ արգելված	Նշված ոլորտի թափանցիկության վերաբերյալ առկա է երկրների միություն՝ Extractive Industries Transparency Initiative (EITI), որին անդամակցող երկրների ռեզիդենտ կազմակերպությունները կարող են դասվել որպես բարձր ռիսկ, մյուսները՝ սահմանափակ կամ արգելված՝ կախված այլ ռիսկային գործոնների առկայությունից:
21.	Թանկարժեք քարերի և մետաղների արդյունահանում և մշակում իրականացնող ընկերություններ	Բարձր ռիսկ	

22.	Կանխիկի լայնածավալ կիրառությամբ բնութագրվող կազմակերպություններ (այդ թվում՝ ռեստորաններ, մանրածախ խանութներ, խմիչքի խանութներ, ծխախոտի մատակարարներ և այլն), որոնք չեն առնչվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական բացեր ունեցող երկրների հետ	Բարձր ռիսկ	
23.	Խոշոր ունեցվածք ունեցող անձինք (High net worth individuals), ովքեր ունեն նվազագույնը 1 մլն. ԱՄՆ դոլար բարձր իրացվելի ակտիվներ կամ կանխիկ միջոցներ կամ բանկային հաշվի մնացորդ:	Բարձր ռիսկ	
24.	Թրասթեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք (բացառությամբ արգելված երկրներում գրանցված, գործունեություն ծավալող իրավաբանական անձանց և կազմավորումների)	Բարձր ռիսկ	
25.	Հաճախորդներ, որոնց սպասարկումը Ընկերության ՆԴՄ հիմնավոր կարծիքով և/կամ Լիազոր մարմնի կողմից ստացված ազդակների հիման վրա պարունակում է համբավի կամ այլ էական ռիսկեր, անկախ սույն փաստաթղթում նշված ռիսկ ախորժակից:	Բարձր ռիսկ/ Սահմանափակ/ Արգելված	

Աղյուսակ 2

Ռիսկ ախտորժակի քանակական չափանիշներ, գործարքների կատարման հատուկ կանոններ

	Նկարագրություն	Ռիսկ ախտորժակ	Կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատվող շեղումներ	Մեկնաբանություն
1.	Ոչ ռեզիդենտ հաճախորդների տեսակարար կշիռը ընդհանուր բազայում	70%	5%	Տարեկան մեկ անգամ իրականացնել տվյալների թարմացում և ռիսկի վերազնահատում
2.	Բարձր ռիսկային հաճախորդների քանակն ընդհանուր բազայում	20%	5%	6 ամիսը մեկ իրականացնել տվյալների թարմացում և ռիսկի վերազնահատում
Այդ թվում՝ բարձր ռիսկի մեջ				
3.	Բարձր ռիսկային ֆիզիկական անձանց տեսակարար կշիռ	55%	3%	6 ամիսը մեկ իրականացնել տվյալների թարմացում և ռիսկի վերազնահատում
3.1.	ՔԱՈՒԱ-ների/մեծ ունեցվածքի տեր հաճախորդների տեսակարար կշիռը բարձր ռիսկային ֆիզիկական անձանց շարքում	70%	3%	
4.	Բարձր ռիսկային իրավաբանական անձանց տեսակարար կշիռնը	45%	3%	

4.1.	Բարձր ռիսկային ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը բարձր ռիսկային իրավաբանական անձանց մեջ	35%	1%	
5.	Ընկերություններ, որոնց բաժնետիրական կառուցվածքում ներառված մասնակիցը/ները գտնվում են ԱԱԿԳ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում և որոնց բաժնեմասի հանրագումարը չի գերազանցում 50%-ը:	1%	1%	Պայմանով, որ ընկերությունը կարողանում է իրականացնել ՀՊՈԻ տվյալ հաճախորդների գործարքների մասով: